

ԳԻՐԱԴԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐՁԱՆԵՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶԱՎԱՆՋԻ ՎԵՐԱՓՈԽՎԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կամ՝ Մեծ Եղեռնի փաստը վերահասարակական հիշատակության գրքեր

Հայկական հարցից թուրքական ազգայնացում
Հայաստանի երկրում հայ չթողնելու մի ահեղ ելքով,
Որ ոչ լավ էր, ոչ էլ վատ էր
Մարդկային ցեղի երբեմն կրած անապատության մեջ
Եւ մինչեւ անգամ իրենց՝ թուրքերի
Արյունով հունցած սեւ պարմության մեջ:

ՊԱՐՈՒՅՐ ՄԵԻՄԿ

Լույս են տեսել Յարութիւն Իսկահապետանի «Վկայական Հայկական Յեղասպանութեան» գրքի Ա եւ Բ հատորները: Հեղինակի կենսագրությունից տեղեկանում ենք, «Յարութիւն Յովհաննէս Իսկահապետան ծնած է Պէյրութ, Լիբանան, 1952-ին: Նախնական կրթութիւնը ստացած է Նոր Հաճնոյ Սահակ-Մեսրոպեան վարժարանը եւ ապա յաճախած է Հ.Բ.Ը. Միութեան Յովակիմեան-Մանուկեան մանչերու երկրորդական վարժարանը, զոր յաջողութեամբ աւարտելով մտնում է Պէյրութի Ամերիկեան Համալսարանը, ուրկէ վկայուած է իբրեւ բաղադրաչափաբան ճարտարագէտ եւ նոյն մասնագիտութիւնը եղած է իր կեանքի ասպարէզը:

Իր հետաքրքրութեանց ծիրէն ներս յապուկ տեղ կը գրաւեն հայոց գրականութենէն պարմական վեպերը, պարմութեանը եւ ամէն ինչ որ առնչուած է Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ հայկական բնօրրաններու պարմութեան: Այս հետաքրքրութենէն ելլելով, ան սկսած է խորանալ Հայոց Յեղասպանութեան տարբեր փուլերու յուշագրական հրապարակութեանց ոլորտին մէջ, որմէ եւ ծագած է այս եւ նմանօրինակ հատորներու յոյս ընծայման գաղափարը:

Նախաձեռնողն ու հեղինակն է «Վկայարան Հայկական Յեղասպանութեան» մարմնաշարին, որուն Ա. գիրքը լոյս տեսաւ 2010-ին, Բ. գիրքը՝ 2011թ., Պէյրութ»:

Այս հատորները հայոց եղեռնապարտմի գրականության մեջ իրենց բացառիկ տեղն ու նշանակությունն ունեն՝ ճանաչողության նոր դռներ բացելու եւ անհրաժեշտ տեղեկատվությունը ավելի ամբողջական ու համապարփակ ներկայացնելու առումով: Այս հատորներին վիճակված է չափակշռելու մարդկային տառապանքը,

և իր թերի իմացության մեջ չկողմնորոշվող կամ բոլորովին անտեղյակ մարքին ուղղորդելու դեպի հեռավոր օրերի արյունալի իրականություն և նորից մարմի վերապրելու փարպարոսի չսպիացած մանրամասները, որ երբեք հնարավոր չէ մոռանալ և չի կարելի մոռանալ: Ինչպես Ավերիս Ահարոնյանը կասեր. «Այսքան չարիք թե՛ մոռանան մեր որդիք, թող ողջ աշխարհի հայուն կարդայ նախաբինք»:

Մեծ Եղեռնից հետո այդ անպարագիծ ոճրագործության մասին հայ և օտար հեղինակների կողմից հազարավոր գրքեր են գրվել ու տպվել, և դեռ շարունակում են գրվել ու տպվել, վավերագրական ու գեղարվեստական ֆիլմեր են նկարահանվել, հազարավոր սեմինարներ ու գիտաժողովներ են անցկացվել, միջակարական հարաբերություններում բանակցող կողմերի սեղաններին անհերքելի փաստաթղթեր են դրվել, և այդ գործընթացը դեռ շարունակվում է, ու դա շարք բնական է, քանզի չափազանց մեծ է ողբերգության ցավն ու այդ ցավի աշխարհագրությունը, և չափազանց փարողունակ է այդ ցավի մասին պարամոլ փաստացի նյութը: Եղեռնի մասին իր ճանաչողությունն ամբողջացնելու որևէ անհատական ձգտում չէր կարող նպատակին հասնել. դա ահռելի ջանքեր ու մասնագիտական հմտություններ է պահանջում: Ներաբրքրասերն, իհարկե, կարող է որևէ հանրամարչելի գրքի կամ գրքերի օգնությամբ քիչ թե՛ շարք ամբողջացնել իր իմացությունը այդ աննախադեպ ոճրագործության մասին, բայց համապարփակ ու շրջանակված տեսնել այդ ահռելի նյութը՝ պարզապես անհնար է: Ահա հենց այս իրողության հարակ գիտակցումով է առաջնորդվել Յ. Իսկահարեանը, ձեռնարկելով ազգօգուտ մի գործ, որում ցեղասպանության հետ առնչվող հայերեն ու օտարվեզու բոլոր գրքերից ոճրագործության մասին նյութերը՝ ողբերգությունն ապրածների հիշողությունները, ականատեսների վկայությունները, գուր անհատական նախաձեռնությամբ ողբերգության մանրամասների մեջ խորացածների գրառումները, վավերագրական ու գեղարվեստական պատմությունները, երբեմն սեղմ, քաղվածաբար, երբեմն վերաշարադրելով ընթերցողին հասցնելու շարք կարևոր ու հայանպասք գործը: Իր բնույթով սա մի յուրաքանչյուր հանրագիտարան է, ցեղասպանության հանրագիտարան, մի յուրօրինակ տեղեկատու-ուղեցույց հայոց եղեռնապարտմի գրականության, որը ցանկացած հերաբրքրասեր ընթերցողի հնարավորություն կտա այդ բնագավառում ճիշտ կողմնորոշվել՝ իրեն հերաբրքրող նյութը հնարավորին չափ կարճ ժամկետում հայթայթելու գործում: Այլ խոսքով՝ սա մի շարք կարևոր ու անհրաժեշտ ձեռնարկ է, համահավաք ու գորավոր մի վկայություն, որը կօգնի գոնե մտաւոր պարկերացում կազմելու այն զազանացած ցեղի զազանային վարքի մասին, այն արնախում հրոսակների մասին, որոնց հերոնորդներն այսօր, ժպտաշուրթ դիվանագիտությամբ ու կողքից նայողի անմեղությամբ, փորձում են հերքել ու սքողել ոճրագործության ողջ հրեշավորությունը և հազարումի սպոր հնարքներով մոլորության մեջ զցել ողջ քաղաքակիրթ աշխարհին: Բայց անցել են մոլորության մեջ զցելու ժամանակները, թացը վաղուց է զարվել չորից, և եթե որևէ երկիր այսօր չի բարձրաձայնում կարարվածի մասին կամ չի ընդունում Նայոց Յեղասպանության փաստը՝ գուր

աշխարհագրական ու փնտեսական շահերից ելնելով է առաջնորդվում: Եւ հաճախ պետական շահը բռնում է իրականության դեմը. նավթ, գազ, միջպետական փարանցիկ դարպասներ, հեռահար երազանքների փայփայում, ակնկալիքներ՝ իրական ու եթերային... Միջպետական հարաբերությունները գնալով դառնում են առաձգական. կայուն, հավասարակշռված հարաբերություններում անգամ մեկ էլ փնտար մի անակնկալ մագուրաբույր շահ փառակալում ու բռնում է ճշմարտության երեսը: Եւ բարեկամությունն ու բարոյականությունը մղվում են հետին պլան: Ճշմարիտ է ասված. «Չկան մշտական բարեկամներ ու մշտական թշնամիներ, կան մշտական շահեր»: Եւ այդ գերակա շահը դառնում է հարաբերություններ չփչացնելու նպատակ, իրականությունն ու այդ իրականության մասին վերաբերմունքը պարտեհապաշտոնն համահարթեցնելու գերխնդիր, շահը վարագործում է արդարության բաց ճակատը, ու մաշկագերծ փաստը հաճախ դառնում է թվացյալ անբեկանելիության դիմակ: Բայց միշտ էլ գոյություն ունեն մեծ ու փոքր շահեր, եւ այդ մեծ ու փոքր շահերի հաշվարկում խճճված այսօրվա դաշնակիցը Մեծ շահի թիկունքում վաղը կարող է դառնալ թշնամի: Թուրքերը դա շատ լավ են հասկանում եւ անում են հնարավոր ու անհնարին ամեն բան, որ օր-օրի ավելի ուժգին աղաղակող արդարության դեմն առնեն, բայց ինչպես ժողովուրդն է ասում՝ մախաթը ջվալի մեջ երկար չես պահի. կարծես թե ժամանակի կույր մոլորության մեջ պարտուհաններ են բացվում, կարծես թե այս հարցի վերաբերյալ թուրք հասարակության վերաբերմունքն ու, մասնավորապես, թուրք մրավորականության կարծրացված մրաժողությունն սկսել են խորքից ճաքեր փայլ: Այդ ճաքերի արանքներից դեմքեր են հառնում՝ վկայումի չլող ճիչը շուրթերին, անհերքելի մանրամասներ են բացապարզվում, եւ այսօրվա մրաժողությունը, կարծես թե, այլևս չի փրկավորվում քարացած ու անձեռնմխելի դարձած հին կապանքների մեջ: Այսօր թուրք մրավորականության մեջ երբեմն երբեմն լսելի են դառնում սթափ ու արդարամիտ ձայներ: Բայց երկրի իշխանությունները այդ ձայները փորձում են վայրենի արագությամբ խեղդել հենց բնի մեջ: Եւ այդ ճանապարհին նրանք իրենց միջի այլակարծիք ընտրյալներին անգամ չեն հանդուրժում, որի մեջ ժամանակ առ ժամանակ խիղճն ու բանականությունն են արթնանում: Նրանք չեն հանդուրժել ու ճշմարտախոսության պարճառով հալածել եւ երկրից վտարել են ցեղասպանագետ Թաներ Աքչամին՝ իրենց ցեղի արյունոտ «թասիբին» չկանգնելու համար... Նրանք չեն ներել ու շատ շատերին են երկրից վտարել, նրանք պարբաբ են հռչակելու Նոբելյան մրցանակի դափնեկիր իրենց առաջավոր գրողին՝ Օրհան Փամուկին անգամ, որ հանդգնում է կասկածի փակ չառնել Հայոց Ցեղասպանության փաստը, որ հանդգնում է պարզապես մարդ լինել ու չկորցնել իր հիշողությունը:

Բայց ինչ էլ անեն՝ ցեղասպանությունը, ի վերջո, անթելված ճիչ է եւ այդ ճիչը անհնար է լռեցնել: Ցեղասպանության մասին լռություն պահպանելն անգամ իր մեջ ճիչ ունի, այդ լռությունն անգամ լեզվանի է, որովհետեւ Դեր-Ջորի անապատում հանգչող ոսկորների փնթոցն այսօր լսելի է անգամ ամենաանբեկանելի մարդկանց: Ոհմակավորված մարդկերի վայրագության թափը փրկելի մեջ անգամ

այլևս անհնար է սանձել, եւ այս հատորների մեջ մաքնանշված գրքերի էջերից հառնող վավերագրական ու գեղարվեստական պատմաների սահմեղեցուցիչ տեսարանները ընթերցողին սրիպում են վերանայել իրենց պատկերացումները «մարդու» մասին: Ընթերցում եւ այս ամենն ու մի պահ մոլորվում. մա՛րդն է իր էությանը համապատասխանող իրավիճակի մեջ անասնանում, թե՛ անասուններ կան, որ մարդու դեմքով են ծնվում... Գնահատականը, երեւի թե, քաղաքակիրթ աշխարհը պիտի տար, բայց քաղաքակիրթ աշխարհը ափ շարքած ձկան վիճակում էր. զարմանքից քար կտրած՝ բերանն էր բացուխուփ անում ու... լռում: Իսկ արանքում անպաշտպան հայն էր՝ գոյությունից չգոյություն, որն իր արարումի տքնանքում աշխարհը գեղեցիկ տեսնելու եւ գեղեցիկ դարձնելու իր երեզանքով էր հմայված. մի կողմից յաթաղանի բացշեղք փայլ, մյուս կողմից՝ բանասերեղծական միտք ու պատկերի արարում, բռնաբարոյի տարփանքով շնչող անասնահոտ, ու եղնիկի պէս խրտուրդ կույսեր, փախնքի պէս ծորացող մեղեդու վավաշոտ վայնասուն, ու իմաստուն ծերունու հորդոր-խրատ՝ «Ուրիշի վրա քար մի շարտի, բալես, քարի մեջ արյուն կա»: Մենք մեր քարաստան աշխարհի քարը մեր բո՛ի մեջ պահեցինք, քարը մեր բո՛ի մեջ տաշվեց, հղկվեց, մեր ոգու ծեսով շենք ու շինություն, մարտ ու վանք դարձավ, իսկ նրանց շարքած քարը մեր աչքը հանեց: Նոնքն էլ հեղք: «Նայոց աշխարհի հայկական քարը II Ջարդում-փշրում էր հայոց քանքարը...»:

Ոճագործության իրենց ահեղի գերանը ուրիշի աչքին չոփ ցույց տալու, որպէս չոփ ներկայացնելու աճապարարությամբ տարված, նրանք ոչ մի բանի առաջ գեր մեկ վայրկյան չեն կանգնում՝ արյան ծովից չոր դուրս գալու համար, իսկ մեր տառապանքի գերանը չոփ դարձնելով, իրենց արնոտ ու դեռ այդպէս էլ չմաքրած աքամների արանքներն են քչփորում-հանում, որպէսզի հին համը չկորցնեն: Այս երկու հատորները հենց այդ արյան ծովի ու արնոտ աքամների փաստագիր վկաններն են, որոնց չխուսացող էջերում դեռ շրջում է արնոտ աքամներով այդ մարդագայի սեւ ուրվականը, որ ասես անթաղ մեռելի անեծքի պէս դեռ սարսափ տարածելով թեւածում ու լինելության լույսը սեւ երիզով շրջանակված է ուզում տեսնել: Ես ձեռքս վերցրի Ա. հատորի հենց առաջին գիրքը՝ Սարգիս Մ. Ծոցիկեան, «Նայկական» ու կարդացի պատահական մի էջ՝ «Երազ մը».

«Միաք եւ Եսթեր գոյգը իրենց երկու գաւակներով քաղաքին բոլոր հայոց պէս կը բռնագաղթուին: Երբ քիչ մը կը յառաջանան, տղամարդիկը կիներէն ու երեխաներէն կը գապեն:

Կիներու կարաւանը կը հասնի տեղ մը, ուրկէ պէտք էր գետը անցնիլ: Ոստիկանները զիրենք լաստի մը վրայ կը հանեն: Լաստը ջուրերուն վրայ՝ ոստիկան մը կը փարձէ հայտի մը բռնաբարել: Այս իրարանցումէն յառաջացած շարժումին պատճառաւ, լաստին ծայրը գտնուող երկու կիներ իրենց երեխաներով ջուրը կիյնան: Ոստիկաններն այս տեսարանը տեսնելով կը գուարճանան: Ատոր վրայ՝ թուրք ոստիկանները կը սկսին աղջիկներ եւ կիներ բռնաբարել: Ապա իրենց սուրերը մերկացնելով, լաստին վրայ գտնուող «աւելորդ» կիները կը վիրաւորեն

և ջուրը կը նետեն: Այս միջոցին, ոստիկան մը կը փորձէ Եսթերը բռնաբարել: Երբ դիմադրութեան կը հանդիպի, ան Եսթերի գիրկին կաթընկեր մանուկը առնուցելով կը հեռանայ կարաւանէն քիչ անդին ու կը սպառնայ մանուկին գլուխը ջարդել: Երբ Եսթեր կը շարունակէ ընդդիմանալ, ոստիկանը, իրօք, երեխային գլուխը կը ջարդէ: Նրէշն ապա կը մօտենայ Եսթերի միւս երեխային: Մայրը յառաջ կը նետուի և կը գրկէ իր սիրասունը: Ոստիկանը կը սպաննէ նաև Եսթերի երկրորդ զաւակը: Եսթեր խիզախ շարժումով մը կը նետուի, սուրը կը խլէ ոստիկանին ձեռքէն ու կը վազէ անոր ետեւէն, բայց վերջինս կը յաջողի գետնին գլուխը ջախջախում երեխայի դիակը Եսթերի երեսին շարժել: Եսթեր գետին կը փռուի: Միւս ոստիկաններն ալ կը հաւաքուին: Անոնք կը թողուն Եսթերը, որպէսզի քանջուելով մեռնի:

Կարաւանը յոգնած և սպառած կը հասնի անապատ: Արդէն մէկուկէս ամիս անցած է: Ոչ ջուր կար, ոչ ալ ուրելու յարմար բոյսեր: Նիւթած և մաշուած Եսթերը խելագարի տեսք ունէր: Նիւթողները անդարման կը մեռնէին: Վերջապէս, Եսթեր ալ գետին կը փռուի յախքենական քունով»:

Ահա և մարդու և մարդագայի անջրպէտը, ահա և խելագարության բաց նյարդը, որի անլուելի թրթիռով գեհեհնի ճիրաններում մորթվող մի ողջ ազգի քառապանքը վերապրում ու սեւակյան մարքի դողերոցքով ես բռնվում.

-Դե եկ, Վարդապետ,

Ու մի ցնորվիր...

Իսկ ցնորվել կարելի էր ամեն օր ու ամեն պահի: Արյունոտ իրականությունը այնպէս տեսանելիորեն էր թափանցիկ, որ կարճ մի պատումի մեջ անգամ զսպանակված ցնորքով էր լեցուն ողբերգության ողջ գունապարկերը: Իհարկէ հարյուր հիսուն գրքի փոխարեն երկու հարոր կարդալով՝ մեր պարկերացումները պիտի որ լիակատար չլինեն թուրքի ննգաբարտ վարքի ու նրա կողմից իրականացված Մեծ Եղեռնի մասին, բայց, ինչպէս ասում են, ծովի ջրի բաղադրությունն իմանալու համար ամենեւին էլ պարտադիր չէ խմել ողջ ծովը. փորձառու հետազոտողի համար մի կաթիլի մեջ անգամ ծովն առկա է: Ամեն մի պատումի մեջ արյուն ու քառապանք կա, խեղված ճակատագրեր են գուցահեղում ու փոշիանում շէկ անապատի ամայության մեջ, ամենուրեք ողբ ու թշվառություն է. քառապանքը նույնն է, քառապանքի չափն է քարերը, գազանությունները նույնն են, դիպվածի քնահաճույքներն են քարերը, մորթողները նույնն են, մորթվողներն են քարերը...

Ահա մեզ քաջածանոթ մեկ այլ գիրք՝ Անդրանիկ Ծառուկեան, «Մանկութիւն Չունեցող Մարդիկ»: Վերնագիրն իսկ այնքան խոսուն է, որ կարելի է անգամ անվրեպ գուշակել խաթարված հեքիաթի ողջ անհերթելիությունը: Ասում ենք՝ անհերթելիություն, որովհետև հեքիաթն ավարտվում է, բայց երկնքից խնձոր չի ընկնում, եթե ընկնում էլ է՝ բորենին այն հենց օդի մեջ է խժռում: Պարկերն, իհարկէ, ծանր է, բայց, այնուամենայնիվ, մեջբերենք փոքրիկ մի հարված.

«Մանկութիւն է օրդ, հէ՛յ պզգիկ Պեպրոս, երբ ամէն գիշեր ճիչերովդ կարթնացնէիր ամբողջ որբանոցը ու կաղաղակէիր՝ «Եկա՛ն, եկա՛ն». որովհետև

աչքերովդ Կեսաձ էիր մայրիկիդ ու մեծ եղբորդ մորթուիլը «Մեծ ծառին Կակեն անցնող ջուրին քով», ու Կեսարանը ամեն գիշեր կը յաճախէր մղձաւանջներով լեցուն քունդ ու՝ «Եկա՛ն, եկա՛ն...»:

Ամբողջ որբանոցը լցված էր անմեղ հոգիներում այսպիսի ողբերգական ապրումներ կրող երեխաներով, խեղված ճակարագրի այս մեկ արյունալի պարկերն իսկ բավական է այն անարարներ երոպացու աչքերը բանալու համար, որ նա շահի կախարդանքից մի պահ կտրվի ու ներանձնական շաղախում ըմբռնումով չափակշռի ցեղասպանության ողջ ողբերգականությունը: Եթե, իհարկե, ցանկանա: Եթե, իհարկե, մտքի ու խղճի դարպասները կհաբաց թողնի վշտի առաջ: Եթե չի էլ կարողում, գոնե վերնագրերին ծանոթանա, որովհետև գրքերի վերնագրերին ծանոթանալն անգամ որոշ պարկերացում է Կալիս կարարվածի մասին: Թվարկենք մի քանիսին ու ամեն ինչ պարզ կդառնա. Մարտիրոս Սասունցի՝ «Սև Օրագիր», Արմեն Անոյ՝ «Արեան ճանապարհով», Ազնիւ Գուրգէնեան՝ «Կեանքիս Սև էջը...», Նայկանոյ՝ Մելքոնեան՝ «Կեանք եւ Մահ», Երանուհի Սիմոնեան՝ «Իմ Գողգոթաս», Նուարդ Արծրունի՝ «Մահուան Ձորին մէջէն», Երուանդ Տէրենց՝ «Ես Տեսայ Տէր Զօրի Դժոխքը...», Տոքթ. Անուիս Նազգաշեան՝ «Եղեռնի հետքերով», Յարութիւն Մարտիկեան՝ «Թրքական դժոխքից Նացիստական Դժոխք»... Եւ այսպէս շարունակ. ողբուլացով հյուսված փողեր, փողեր, որոնցից արյուն է կաթում: Եւ այսպէս ահա, առանց խորականության, սրի էր քաշվում մի ողջ ժողովուրդ, եւ առանձնահատուկ սեւեռումով, առանձնահատուկ նպատակամղվածությամբ, եւ առանձնահատուկ դաժանությամբ՝ մրավորականությունը. գրողներ, բանաստեղծներ, քաղաքական գործիչներ, բժիշկներ, ուսուցչապետներ... Բացում եմ Նրանս Նրահանի «Խօսում եմ անմահները» ինքնակենսագրական վեպն ու կարդում պարահական մի հարված.

«Առաջին Համաշխարհային Պատերազմը սկսած էր: Արեւելեան ճակարի վրայ, թուրքերը կենթարկուին մեծ ճախողութիւններու, որոնց պարճառով կամբաստանեն հայերը, առարկելով թէ անոնք ռուսական բանակին կօգնեն: Իթիհարականները հայոց դէմ դաւադրութիւնը արդէն իսկ պարբաստած էին: Անոնք այս առնչութեամբ խորհրդակցութիւններ կունենան գերմանացի պարասխանատուներու, մանաւանդ դեսպան Հանս Փոն Վանկենհայմի հետ: Այս խորհրդակցութիւնները գլխաւորաբար ներքին գործոց նախարար Թալաթ փաշան կը վարէ:

Այս դաւադրութեան իբր հետեւանք, առաջին հերթին Պոլսոյ հայ մարտականները կը բանարկուին ու կաքտորուին: Կոմիտաս վարդապետը, Դանիէլ Վարուժանը, Ռուբէն Սեւակը, Սիմանթօն եւ ուրիշներ կաքտորուին: Մինչ պարերազմը կը շարունակուի, գերմանական զրահանաւեր ցոյց կը կարարեն Մարմարայի ջուրերուն մէջ:

Արաբագարի երիտասարդներէն մաս մը կը ձեռքակալուի: Չէթ Իպրահիմ կոչուած թուրք հրոսակապետը զանոնք ծեծի եւ չարչարանքներու կենթարկէ»:

Մեկ այլ հարված. «Այս վէպին մէջ, հեղինակը լայն փնտրանքով Գրիգոր Զօհրապի եւ Թալաթի յարաբերութեանց, ինչպէս նաեւ այն դաւադրութեան, որ վերջ դրաւ Զօհրապի կեանքին»:

Եւս մի հասկացաւ, որը «Կոմիտաս վարդապետին աքսորէն դէպի Պոլիս վերադարձին մասին է: Նոս հեղինակը մանրամասնօրէն կը նկարագրէ հայ գաղթականներուն թշուառութիւնն ու տառապանքը, ինչպէս նաեւ անոնց սպաննուիլը, որուն Կոմիտաս վարդապետը ականաւորէ կրկայ»:

Եւ այդ հրեշափոր ոճագործությունը թուրքի հենց այս գարշապիղծ ոգով էր թանձրանում. համապարօթ խաբէություն ու կոտորած էր, համապարօթ սուգ ու վայնաստուն, եւ այս ամենի գլխին գանգակի պէս կախված էր Կոմիտասի ողբը, որը ոչ մէկը չէր ուզում լսել եւ առավել եւս՝ նրա ցավը դարմանել: Լսենք Բանաստեղծին.

Երբ անցնում էր նա Բանկալթու մայթով՝

Մի ձայն էր հնչում

Նաճախ ականջում.

Թ-վում էր՝ ձայնեց իր Սիամանթուն,

Թ-վում էր՝ իրեն Դանիելն է կանչում...

Այդպէս լսվում ու մարում էին հայոց հանճարների ձայները, իսկ շուրջըլորը քար անտարբերություն էր: Եւ այդ քար անտարբերությունից առավել ոգետրված ու արյան համին ընկած բորենին լսվում ու չէր կշտանում: Իր գոթութիւնի մեջ արթուն օտարն անգամ կարծես սթափվում ու իրեն մի պահ խելագարության մագն կամուրջի վրա էր տեսնում, որովհետեւ հասկանում եւ իր խորքային բովանդակությամբ վերլուծելիս զգում էր, որ այդ թափի վիշտը, ի վերջո, միայն անհատական հասցեով չի ծրարվում. դա համայն մարդկության դէմ գործած հանցանք էր, համամարդկային ու փրկելիական ողբ, որի անունը խելագարություն է: Դա բաց աչքերով տեսնված մղձավանջային երազ էր, որտեղ միայն ունայնության քամիներն էին վայում: Եւ առաջավոր մտքի մեջ աղճատվում էր լինելության բովանդակությունը, արժեգրկվում էր մարդ լինելու առաքելությունը, արժեգրկվում էր կյանքն իր ողջ գունագեղությամբ, քաղաքակրթություն հորջորջվող նվաճումը դառնում էր սովորական խաբկանք, ու մարդուն զգում մոլորության տուրապը...

Կարդում ես վկայակոչված գրքերի սեղմանյութը եւ քեզ համար պարզում շար կարեւոր մի բան. հաճախ որեւէ մի ընտանիքի, բռնի խաւանացման, թրքացման ու թրդացման, կամ որեւէ մի դեպքի մասին բերվում են հայ եւ օտար հեղինակների, տարբեր ականաւորեանների վկայություններից կամ հիշողություններից պատրաստվելու, որոնք գրեթէ բառացիորեն համընկնում են եւ միասին ու, միաժամանակ, իրարից անկախ դառնում են վավերագիր արձանագրությունների ու անհերքելի ճշմարտությունների կնիքավորված հաստատումներ, ճշմարտության դռների յուրաքանչեւ բանալիներ՝ մոլորության մեջ խարխափողների կամ հայրկապէս խարխափել սիրողների համար: Բայց ինչպէ՞ս խարխափես, երբ թուրքի մահվան պարը մահվան տեսիլքի սարսափով շրջում էր հայի թշուառության զնդաններում, շրջում ու մահվան գերանդիով հնձում էր ահել ու ջահել, կին ու երեխա... Եւ իր գազանաբարո խրախճանքի մեջ արյան գոլորշուց խենթացած վայրենին դեռ քարանձավի օրէնքներով էր առաջնորդվում: Քարանձավի օրէնքը պերական

օրենք էր հռչակված, ու պետական բարձրաստիճան այրերը նույն մարդակերներն էին՝ ավելի ցինիկ ու դաժան, եւրոպական արդուկներով արդուկված հոգիներով, ու վիրահարված խղճերով, որոնք ջիհադի անբանական կոչերով բորբոքում էին առանց այդ էլ հռչակելու մոլուցքով տարված ամբոխի քարանձավային բնագոյները: Եւ հարկ եղած դեպքում փողկապավորվում ու հիշողությունները կորցրած եւրոպացի մեծավորների մոտ արդարանում էին: Դա թուրքի դասական ցինիզմն էր, չմակարդվող արյան անհանգրվան հոսքը, ինքն իրեն անգամ խաբելու հղկված բնագոր, որ հաճախ անսրելյակ աչքի առաջ քաղաքակրթության զանգուլակներով էր գուգասվորվում: Ասվածի ճշմարտության մեջ հազարներորդ անգամ համոզվելու համար, բացենք Աւերիս Փափագեանի «Նայերի Յեղասպանութիւնը Թուրք Քաղաքական-Գործիչների Յուշագրութիւններում» գրքի՝ «Նայոց Յեղասպանութեան Գլխավոր Յանցագործ Թալաաթ Փաշայի Յուշագրութեան Մասին» գլուխն ու կարդանք մի հարված.

«1946-ին Շիւսէյն Ճահիթ Եալչընի համառօտ յառաջաբանով լոյս կը տեսնեն Թալաաթի յուշերը: Անհրաժեշտ է նշել, թէ գիրքը հեռու է յուշագրութիւն ըլլալէ: Փոփոխութեան ենթարկուած է արդեօք օսմաներէն բնագիրը ժամանակակից թրքերէնի վերածուելու ժամանակ՝ մեզի համար անյայտ է: Պարզ է, որ գիրքը հրատարակուած է որոշ նպատակով ու կը համապատասխանէ տուալ ժամանակի ոգիին: Այնպեղ ամէն ձեռով նենգափոխուած են փաստերը եւ պարմական իրականութիւնը: Նպատակը Անդրկովկասի մէջ թուրքերու նուաճողական նկրտումներէն ելլելով թուրք հասարակութեան շրջանակին մէջ թշնամանք եւ արելութիւն սերմանելն է հայ ժողովուրդին հանդէպ»:

Այդ գրքի «Նայկական Նարցը Եւ Մեծ Եղեռնը Ճեմալ Փաշայի Յուշագրութեան Մէջ» գլխից մեջբերենք մեկ այլ խոսուն հարված.

«5 Յուլիսի 1919-ին Կ. Պոլսոյ ռազմական արտակարգ արեանը մահուան վճիռ կարձակէ Թալաաթի, Էնվերի, Ճեմալի, Նազըմի, Պեհաւերիին Շաքիրի եւ ուրիշներու նկատմամբ: Այս որոշումէն կարճ ժամանակ ետք Թալաաթն ու Ճեմալը (որոնք փախուստի մէջ էին) կը ձեռնարկեն իրենց յուշերը գրել: Այս յուշերուն մէջ, երկունքն ալ, սրելով, իրենք զիրենք մեղաւոր ու յանցաւոր չեն նկատեր Նայոց Մեծ Եղեռնին համար:

Նեղինակը կանգ կառնէ Ճեմալ փաշայի յուշերուն մէջ «Նայկական Նարցը» խորագրով գլուխին առջեւ: Ճեմալ 1915 թուականի ողբերգութեան դրդապարճառները կը վերագրէ ցարական Ռուսիոյ վարած քաղաքականութեան: Ըստ իրեն՝ Ներսէս արք. Վարժապետեան Պարբիարքը Սան Ստեփանօ գացած է ցարին հովանաւորութիւն խնդրելու հայոց անկախութեան հարցով, մինչդեռ ան գացած էր ոչ թէ անկախութիւն հայցելու, այլ որոշ չափով վերջ տալու հայոց հանդէպ կատարուող ճնշումներուն, հարստահարութեան եւ խտրականութեան: Ճեմալ փաշա ակնարկելով 1894-1896-ի ջարդերուն, կըսէ թէ թուրքերը անբարեացակամ վերաբերում չունեցան հայոց հանդէպ: Ան կը նշէ, թէ ինք եւ երիտթուրքերը խտրագոյն կերպով կը դատապարտեն այդ իրադարձութիւնները»:

Այս հատվածների մեջբերումը պարահական ու ինքնանպարակ չէ. այսպեղ շարք վառ ու խորացված երևում է անպարկառույթյան ու լկտխոյթյան այն գերադրական աստիճանը, որից անդին արդեն չգոյությունն է՝ իր սեուագգեստ հանդերձանքով: Շարք բնական հարց է առաջանում՝ եթե ոչ իրենք՝ թուրքերը, այդ դեպքում ո՞վ էր մրահողացել այդ հրեշավոր ծրագիրն ու իրագործել այն, իրենք այդ ո՞ր մի բարբարոսի կողմից իրագործված ոճրագործությունն էին դարապարտում: Նույնիսկ չեն հասկանում, որ այս գործելակերպը, մրաժողության այս հաշմանդամ երթը, չքմեղանալու այս թլպարված գառացանքը նախեսառաջ ծաղր է իրենց՝ թուրքերի հանդեպ, որովհետև ստի մեջ անգամ մտքի բանական թրթիռ ու ճշմարտության հատիկ պիտի լինի, տրամաբանության ծվեն պիտի լինի, որպեսզի օղավորված գառացանքը ինքն իր մեջ չփոշիանա: Բայց ինչ կարող ես անել, սա է թուրքի մտքի ու հույզի արաղձը, սա է թուրքի ժպտաշուրթ դեմքը, որ կարծես փսիներով է հյուսված, որ մարդուն նայելիս նրա մեջ միայն գոհ ու նահապակ է տեսնում: Կարդալով այս հատորները մեկ անգամ ես համոզվում ես, որ թուրքի համար չկա մարդ, կա միայն արյուն ու թափված փորոտիք, ես այդ արյան գոլորշիներում վայրենիներին հատուկ խրախճանքի իր սեուադիմակ պարք: Այդ սեուադիմակ պարք մեր սերունդն էլ տեսավ՝ այս անգամ 20-րդ դարի վերջին՝ Սումգայիթում ու Բաքվում, երբ դեղնա-մոխրա-կապրա-կանաչավուն գայլերը ոհմակավորվել ու կալմեջ էին արել անպաշտպան հային: Գայլային բնագող նորեն եռանդի էր եկել, ես մասնագետ արևախումը որսի էր ելել նորոգված ախորժակով: Ու թիրախը դարձյալ ծողակում հայտնված անպաշտպան հայն էր: Թուրքավարի դարանել ու խփել էին անակնկալ: Անակնկալ ու չսպասված տեղից: Ոհմակի հղկված բնագող ու կանխավայելք հրճվանքով: Իսկ մեր հիշողությունը կարծես խուռացել էր, սահմոկեցուցիչ մանրամասները լսում ու զարմանքով իրար էինք նայում՝ ո՞նց... Կարծում էինք, թե թուրքը «քաղաքակրթվել» է. ինչպիսի՜ միամտություն... Գոնե դպրոցում մեր սովորածը պիտի մրապահեինք, ընդամենը Մեծ լոռեցու խոսքը պիտի հիշեիք, որ՝

Բերանն արևոտ Մարդակերը էն անբան
Նագար դարում հագիվ դառավ Մարդասպան.
Ձեռքերն արևոտ գնում է նա դեռ կամկար,
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:

Մարդակերության մի փաստացի վկայություն մեջբերենք Եղիա Գահուեճեանի «Յուշեր Ուրֆիայի 1915թ. Ներոսամարտի ու Յերագայ Իրադարձություններու Մասին» գրքից.

«Եղիա, բոլորովին որբ ու անտեր, Մերտինի փողոցները կը դեզերի: Ձմեռնամուտ էր: Քաղաքը լեցուն էր Վանեն գաղթած թուրք մուհաճիներով (գաղթականներով): Անոնք վայրենի էին, գող ու յափշտակիչ: Երկարատե անօթությունը գանոնք մղած էր մարդակերութեան: Եղիա երկու անգամ հրաշքով կազարի այս մարդակեր թուրքերուն ձեռքէն»:

Թուրքի մարդակերության մասին նորից վերհիշենք նույն Սումգայիթն ու ռուս

բարձրաստիճան գինվորականների վկայությունները: Ինչպես ասում են՝ նույն թուրքն է ու նույն ձեռագիրը:

Կարդում ես այս զարհուրելի վկայություններն ու դիպվածի հերազա անակնկալների հանդեպ սարսուռով լցվում. Ճակարագրի բերումով մենք հարևաններ ենք ու պիսի լինենք հարևաններ, բայց ո՞րն է լինելու պարասխանը՝ Մարդն ինչպե՞ս պիսի հարաբերվի Մարդակերի հետ: Թե չէ՝ հարևան, ի՞նչ ասել է հարևան... Նայոց Մեծ Եղեռնից դեռ շար առաջ կար Ջիվանու քրիստոնյա պարզամ-պահանջը.

Թե կուգես հաշար ապրիք, բարի հարևան,

Պարվիս ու կրոնիս, հացիս մի դիպչի...

Թուրքը եւ պարիվը... Նիպալին հարցնում են՝ որն է քեզ համար բարոյականը, պարասխանում է՝ այն, ինչը ձեզ անբարոյական է: Դե արի ու թուրքի մրաժողության փոքր բռնիք, դե եկ ու նրա սարանայական պահվածքի ու դիվային վարքի բնույթն ընկալիր: Ոչ մի սրբություն, ոչ մի արժեք, իսկ այոց սրեղծած արժեքների վրա էլ յաթաղանի ավերիչ սարսափն է կախված՝ հին հիշեցումով. «Այսպեղով թուրքն է անցել»: Բայց սովորաբար հիշեցնում են նրան, ով հիշողություն ունի, ում մեջ անցյալի մասին եղած վերհուշն արթուն է, բայց նրանք չեն հասկանում անգամ, որ մարդը գազանից հիշողությամբ է փաթեղվում, հիշողություն չունեցողի համար աշխարհը արյան հեղեղ ու թափված փոքրիկ է: Եւ հենց դա էլ նրանց խրախճանքն է, նրանց գոյության առանցքն ու մրաժողության անկյունաքարը: Նրանց փեսակի ու աշխարհայացքի, նրանց հավատամքի խրաքված բանաձեռը. «Սպանիր ու հողորիր՝ ինչ կարող ես, բայց...համբուրիր այն ձեռքը, որ չես կարող կտրել»:

Ահա թուրքի «բարեկամության» մասին մի հարված Վերժինէ Սվազլեանի «Նայոց Ցեղասպանության. Ականարես Վերապրողների Վկայություններ» գրքից՝ «Կ. Պոլիս. Տոլրես Գրիգորի Զօհրապ-Լիպանի պարմածը».

«Գրիգոր Զօհրապի դուստրը՝ Տոլրես լաւ կը յիշէ այն ուշ երեկոն, երբ իրենց փան դուռը կը թակեն թուրք ոսրիկանները եւ հայրը կը փանին: Այդ ժամանակ ինք, մայրը՝ Քլարան եւ քոյրը՝ Ներմինէն փունն էին: Եղբայրները Եւրոպա ուսանելու գացած էին:

Եագրճեան ընփանիքէն Քլարան, յաջորդ օրը ռուսական դեսպանափան կը դիմէ իր ամուսնոյն խնդրին հարցով: Ան թուրք բարեկամներու ալ կը դիմէ: Ձերբակալութենէն առաջ՝ Թալաաթ իրենց փունը կու գար եւ Զօհրապի հետ միասին թողը կը խաղար: Բայց թուրքին բարեկամութիւնը վստահելի չէ:

Շար չանցած, թուրքերը Գրիգոր Զօհրապի ընփանիքն ալ կուգեն փեղահան ընել: Բայց օտար դեսպաններու միջամտութեան շնորհիւ, չեն յաջողիր»:

Ահա սա է թուրքի «բարեկամությունը» նրա գոյության անձնագիրն ու լինելիության կերպը, կարմրաքակտ աչքերի խորքից նայող նույն վայրենու կերպը, փղամարդկային հպարտության հետ միաբն ու հոգին թլպալալած նույն չալմավորի երբեք չփոխվող կերպը, որը անապարի գույնը խառնեց իր հոգու եւ աչքերի գույնին, ու իր դեղին աչքերի մեջ փոշիացնել ուզեց մի ողջ քրիստոնյա ժողովուրդ:

Փորձեց փռիացնել, բայց, ինչպես ասում են, մուրազը փորը մնաց, որովհետև այն ժողովուրդը, որը չի ուզում մեռնել, որը ամեն օր ու ամեն պահի բան ունի ասելու աշխարհին ու Աստծուն, նրան հնարավոր չէ մեռցնել: Բանական արարած, թե իր հաշիվները իր կեղեկի փակ ամփոփած ծառ՝ արմաքի կենսունակության գորելությամբ է հարապել, մշտաձաձան փառքով ու ապրելու խորհրդով է լուսապսակված, իսկ «Անկիրթ ցեղերը թափառական կուզան ու կերթան»: Եւ այդ ի՞նչ հնարքով, կամք ու կորովի այդ ի՞նչ լարումով, մոզական ձիւրքի այդ ի՞նչ թանձրացումով պիտի այս փողի կախարդանքը հասցնես վայրենուն, երբ նա միայն արյան գույնով կախարդվում ու արյան համից է խենթանում: Իսկ քաղաքակիրթ Եւրոպան, որ դեռ երեկ աչք էր փակում անմարդկային ոճրագործության առաջ, այսօր իր փան դռները կհաբաց արած, նրան, կարծես թե, իր գրույցին մասնակից է ուզում դարձնել: Եւ ո՞րն է լինելու Թուրքիայի անելիքն այնպեղ, ի՞նչ պիտի ասի թուրք դիվանագետը, ինչի՞ց պիտի խոսի՝ իր երկրի քաղաքական մարքի նվաճումներից, արվեստի ու գիտության բնագավառներում ձեռքբերումներից ու իր ունեցած ծանրակշիռ վաստակի՞ց, աշխարհի յոթ ու իր համար յոթանասուն հրաշալիքներից, թե՞ իր ցեղի կճղակավորի մասին պիտի պատմի, որ.

Իր թուրը դրած հայ հողի կնոջ սուրբխորան փորին՝

Գրագ էր գալիս, թե ինչ կրերի.

- Աղջի՛կ, թե քոլա, -

Եւ մանկաբարձի նշարի քեղակ

Թուրն էր կարարում կեսարյան հարում...

Իսկ քաղաքակիրթ Եւրոպան բարոյական ու քաղաքական այլ չափանիշներով է առաջնորդվում, եւ մարքի ու հույզի այս կարգի թանձրացում պարզապես չի ընկալում՝ «Տիմա ո՞վ է հիշում հայերի կոտորածը»: Եւ չեն էլ հիշի, որովհետև նրանց հիշողությունները միայն գվարճանքներով են լցված, իսկ պատահարների ու աղետների բերած ողբերգություններն էլ թեթեւ են փանում, որովհետև մարքի լարումից նրանց գլուխները պտտվում են: Եւ դրա համար էլ պիտի առաջնորդվենք մեր հույսը մեր վրա դնելու ընդունված նշանաբանով, կամ ինչպես ժողովուրդն է ասում՝ եղունգ ունես, գլուխդ քորի: Եւ ահա, վերոնշյալ իմաստով, այս երկու հատորների գոյությունը մեզ համար կարծես սթափության ու նոր գործելակերպի զանգակ լինեն: Այդ զանգի ձայնը ամեն օր ու ամեն պահի է մեզ համար լսելի, դա մեր արյան ու հիշողության երբեք չմեղմացող ցավն է, պիտի ջանանք, որ այդ ձայնը լսելի լինի նաեւ աշխարհի ողջ առաջադեմ մարդկությանը: Մեկ անգամ եւս կրկնելով հասարակներ, որ թեպետ օլարլեզու հազարավոր գրքեր են հրապարակված, բայց, մեր համոզմամբ, այս գրքերի թարգմանությունը աշխարհի առաջավոր լեզուներով՝ այսօր պարզապես հրամայական է դարձել: Վարորդներում բերված նյութերի ու փաստերի համահավաք ամբողջականությունը կօգնի նրանց՝ հեղափոխվողներին, որոշակի նպատակամղումով առաջնորդվելու եւ ազդարարելու նոր հասցեներ որոնելու ավելորդ հոգսից:

Այսօրվա թուրք առաջադեմ մտավորականը հասկանում է, որ հայերի

ցեղասպանությունը իր նախնիները մանրամասն ու հեռահար, խորապես մտածված ու գիտակցված նպատակամղումով են ծրագրել՝ քուրդ հրոսակների հետ դաշնակցած, հրեական երկդիմի գաղափարախոսությամբ առաջնորդվելով, գերմանական գենքու գինամթերքով, գերմանացի սպաների անմիջական խորհրդով ու գերմանական ճշգրիտ հաշվարկներով գոյնեղված («Ֆախրի փաշան շրջապարված էր գերմանացի սպաներով»), և իհարկե, իրենց երբեք չմոռացվող ու անընդհատ թարմացվող պանթուրքիստական հեռահար նպատակներով առաջնորդվելով: Մտավորականը հասկանում է, բայց այդ մտավորականի աչքի ու լեզվի դեմը երկաթյա վարագույր է կախված, որի թիկունքում նույն արյունոտ յաթաղանն է՝ այս անգամ իրենց գլխին կախված: Մա որսի ելած ու որսի ձախողումից կատաղած այն անգղի վարքն է, որը, արյունը աչքերը բռնած՝ բույն է վերադառնում ու իր ձագերին հռչակում: Իրենց մտավորականների աստիճանական արթնացումը լավ են նկատում Թուրքիայի այսօրվա իշխանավորները, և գործի դնելով իրենց ողջ պետական քարոզչական մեքենան, փորձում են ապակողմնորոշելով մոլորության մեջ գցել ողջ մարդկությանը, և առաջին հերթին, իրենց երկրի ազգաբնակչությանը: Եւ ամեն ինչ գլխի վրա շրջելու այս գործընթացում նրանց ցինիզմը հասնում է իր գագաթնակետին՝ ի՞նչ ցեղասպանություն, ի՞նչ բան, հայերն են թուրքերին կոտորել... Ահա և անհերթադրելի գարշահոտը, որն այլևս ծիծաղելի չէ և մեզ արդեն սթափվել ու լրջանալ է պարտադրում... Ահա և հայի հետ իբրեւ թե երկխոսելու պարտասար այսօրվա Թուրքիայի իրական դեմքը, որ կարծես երկնքից թռերն ամպոտ իջել ու փարածաշրջանում խաղաղություն և համերաշխություն հաստատելու առաքելությունն է վերցրել իր ուսերին: Սա արանան հրեշտակի թիկնոցով: Եւ դեռ «օգնողի» իր միջնորդական առաքելությունն ու պարտասարականությունն է հայրնում Արցախի հարցը խաղաղ ճանապարհով կարգավորելու հարցում: Թուրքը և խաղաղությունը... Թուրքը խաղաղության մոտենալիկ... Գերեզմանիդ լույս իջնի, Ջիվանի.

Ուղարկ մերաքսագործ, եզր նավավար,
Գայլը հովիվ դառած կարածե ոչխար.
Աղվեսը հավնոցի դռանն հուշարար,
Ինչ հսկող են գրել, խելքի աշեցեք:

Մոտենում է հայոց Մեծ Եղեռնի 100-ամյակը, և ինչքան մոտենում է, այնքան Թուրքիայի լարված նյարդը սկսում է ավելի ուժգին ջղաձգվել: Հայաստանի նորանկախ պետության իշխանությունների հետ սկսված երկխոսության դեմը թրքավարի առան, և որովհետեւ ասելու բան չունեն, քաղաքակիրթ երկխոսության համար լրջագույն խոսք ու փաստարկ չունեն՝ ամեն մի պատեհ առիթն օգտագործում են հարցը դարձյալ ու էլ ավելի խորը փակուղի մտցնելու համար: Տեղեկարկական բնույթի որեւէ ազդակի չափազանցված ընկալում, բառի հազարերորդ շերտում վրանգի շորշոփ տեսնելու հիվանդագին մոլուցք, մագից մանանեխ ջոկելու երևակայական ցնորք, ու դրա կողքին բարուրի երեխայի անմեղություն, որի օրորոցին լուսնափռի է մաղվել, ու այդ լուսնափռու կախարդանքը նրանց տարել,

հրեշտակների հետ է մտերմացրել... Այսպես ահա թուրքը փորձում է ուսերին գցել խաղաղասերի թիկնոց: Եւ դիվանագիտական աճապարարությունների պարկերը դարձյալ ջրի երես է ելնում. փարբեր փրամաչափի իշխանավորները, մեր բարձրաստիճան պետական այրերի կողմից արտաբերված որևէ բառից կամ մտքից կառչում, բառի ու մտքի էությունը իրենց համար ցանկալի փրամաբանությամբ նենգափոխում ու այնպեղից այսպեղ հոխորդում են՝ հայեր, ուշքի եկեք... Իսկ երբեմն էլ լկարիությունը խփում-անցնում է չափ ու սահմանը. Յեղասպանություն իրագործած երկրի վարչապետը պահանջում է իր մեջ որևէ վիրավորանք չպարունակող, բայց իրենց ականջին անհաճո արտահայտության համար ներողություն խնդրել... Ճշմարիտ է ժողովրդի խոսքը՝ կարմիր կովը կաշին չի փոխի: Նրանք պիտի այդպես վարվեն, որովհետև դա է նրանց էությունը. բացճակապ գրույցում նրանք երբեք էլ հիմնավոր ասելիք չեն ունեցել: Եւ դրա համար մեր խաղաղ պահվածքն անգամ հիմա նրանց նյարդայնացնում է: Նախանձելի վիճակում չեն նաև նրանց դաշնակից պետությունները. նրանց պահվածքի մեջ էլ է լարվածությունը նկատելի: Իրենց պետական շահը, իհարկե, գիտակցում եւ կարևորում են բոլոր պետությունները, եւ դա շատ բնական է ու հասկանալի, բայց ճշմարտությունը շահից գերադասելով, այսօր երկու փասնյակից ավելի պետություններ ճանաչել են՝ Նայոց Յեղասպանությունն ու դադարապարել այն: Բայց աշխարհի քաղաքական մտքի ձեռավորման վրա իրենց առանձնահատուկ դերն ունեցող մի քանի ազդեցիկ պետություններ դեռ սպասում են... Ինչի՞նչ... Ինչ է՝ մենք ամեն առավոտ պիտի արթնանանք ու բարի լույսի հետ նրանց հիշեցնենք, որ արևը արևելքից է ելնում, թե՛ դիվանագիտությունը արևալույսով չի սնվում... Չգիտեմ նրանց համար ինչպես, բայց մեր ճանապարհը եղել ու մնում է լույսի ճանապարհը, եւ ճշմարտությունը միայն լույսի մեջ է տեսնելի: Իհարկե լույսի մեջ տեսնելի են նաև արգելքն ու խոչընդոտը, եւ այսպեղ է ահա, որ չարենցյան «Ով հայ ժողովուրդ, քո փրկությունը քո միասնական ուժի մեջ է» կարգախոսով պիտի առաջնորդվենք եւ այդ արգելքն ու խոչընդոտը համայն հայության միացյալ ջանքերով հաղթահարենք:

Ի համալրումն այս երկու հատորների, իհարկե հրապարակվել են նաև բազմաթիվ այլ գրքեր, այդ թվում նաև գեղարվեստական, որոնց մեջ ոչ թե բուն եղեռնն է նկարագրված՝ իր ողջ մղձավամջային գունապարկերով, այլ եղեռնի շարունակվող արձագանքն է՝ արդեն հիշողությունների ու երագների մեջ: Ես կարդում եմ մեր անվանի արձակագիր Մուշեղ Գալշոյանի «Մարութա սարի ամպերը» պարսվածքների ժողովածուն եւ տեսնում երգրի տեսիլքների մեջ ապրող ծերունիներին, որոնք իրենց հոգեվարքի մեջ անգամ ասես քանդում են ժամանակների շղթան, մի աշխարհից անցնելով մյուսին, տեսիլքից իրականություն, անցյալից ներկա, եւ դրանով իսկ ամբողջացնելով հողեղեն ու հոգետր մի աշխարհ, որ իրենց պապերի ապրած դրախտ է՝ նրանց արյունով ու քրքիւնքով շենացած, որը հետագայում նրանց համար դարձավ արյան ու մղձավանջի խառնարան: Բացում եմ «Դավոն» պարսվածքը եւ կարդում մեռնող ու նրան այցի եկած ծերունիների երկխոսությունը.

«Նամզե Պշուկը ուրքը շեմից ներս դնելու հետ կանչեց.

-Դավո՛ն, ավեր քուն, կերթա՛ն...Կերթա՛ն: - Կրկնեց Համգե Պչուկը եւ ծունկ ծալեց ընկերոջ մահճի մոտ: - Ջիս մենակ է կթողիս, Դավո:

Դավոն գրավ, սեղմեց ընկերոջ ձեռքը, եւ Պչուկը զարմացավ:

-Մեջ քու երակներուն էղբան ուժ կա, Դավո, դու ո՞ր է կերթաս:

«Կոիվ է կերթամ, Պչուկ», - Դավոն մըքում պարասխան քվեց եւ հանկարծ հիշեց...Յիցքարի կոիվն էր...Հիշեց ու ավելի ամուր սեղմեց ընկերոջ ձեռքը:

«Կհիշի՛ս, Պչուկ, Յիցքարի կոիվ քու մի՛քքն է», - կնճիռները ողողվեցին ժպիտով:

-Քու ճակարին ուրախություն կա, Դավո, - նկարեց Համգե Պչուկը, - դու էրգի՛ր է կերթաս:

«Կոիվ է կերթամ, Պչուկ, կգա՛ն»: -Նրան թվում էր, թե կարող է բարձրաձայնել, բայց չէր հասկանում, թե ինչու բերան չէր բացում»:

Ահա այսպես, ուրեմն. հոգեվարքի մեջ մարմնող հալիվորների մեջ անգամ պարվի ու արժանապարվության կոիվը դեռ թարմ է, նախքան հանգչելը նրանք դեռ ճամփա ունեն անցնելու, դեռ «կոիվ է կերթան»: Եւ սա հայ տղամարդու լինելության դողանջն է. քեսիլքի մեջ անգամ նա պարվի անտեսանելի դրոշ է բարձրացնում: Ես կարդացի այս տողերն ու իմ մեջ՝ 20-րդ դարի երկրորդ կեսին ծնվածիս մըքում արթնացավ մանկության օրերի փոքրիկ մի պարամիկ, որը արյան հիշողության հենց այդ քեսիլքով ինձ իմ պապերի երկիրը տարավ...

Ես դեռ մի մար երեխա էի, բայց մեր տոհմական արյունն արդեն թափառումի հոգնությամբ հիմնավորապես ներծծված էր. Էրզրումի դրախտ ծոցից սկիզբ առել, աջոճախ զարկել ու մի հանգրվանում կանգ էր առել՝ շունչ քաշելու: Եւ այդպեղ էլ հասարարվել էր: Եւ երբ ես դեռ շիվի ճկուն տարիքում էի, մի օր մորս հետ մեր արյան հետքով գնացինք: Այդ հետքը հողուջրով ձգվող ճամփա չէր (խորհրդային գերպերության վարագույրները երկաթից էին), մեր միտքը պարզապես մասունքի հիշողության մի ճրվարուն շերտում էր խրացել: Հայրս ծովափնյա Բաթում քաղաք կարտոֆիլ էր տարել ծախելու եւ նախապես մորս հետ որոշել էին՝ կարտոֆիլի փողով Էրզրումի թալանից փրկած գորգ էին գնելու: Եւ մայրս ու ես Ախալցխա գնացինք: Մայրս հարցուփորձով իմացել էր, որ պառավ մի կին գորգ ունի վաճառելու: Մենք գրանք պառավ ու միայնակ այդ կնոջը. աշնան ծառի վրա մնացած ու չիր դարձած մրգի էր նման: Նա լաց եղավ ու ասաց. «Էրզրումն իմ աչքերի մարած լույսի մեջ էս խալու պարկերով կը տեսնիմ: Էրզրումը կորցրինք՝ աշեցեք պարկերն էլ չկորցնենք»: Գորգը փաթաթած տուն էինք բերում, ու ամբողջ ճանապարհին իմ մեջ ասես կրակ էր վառվում, գորգի վառվումն նախշերը իմ փակ էության խորքում արյան հանգով հորձանք էին տալիս, եւ ասես հեռու մի տեղ, յոթ սարի թիկունքում, մորթվող գառան մայուն էր լսվում: Ու արյան մորմոքը ուղեղս տաքացնում էր: Այդ գիշեր ես երագումս առաջին անգամ Էրզրումը տեսա՝ երեւի թե իմ պապերի աչքերով ու այդ գորգի պարկերով, այդ գորգի պես հարազատ ու թանկ: Ու Էրզրումի քեսիլքն ինձ համար մեկընդմիջը գծագրվեց այդ գորգի գույն ու երանգով: Ժամերով նստում նայում էի գորգին, ու նրա նախշերի մեջ ասես գեպեր ու հովիտներ էին ուրվագծվում, վանքեր

ու եկեղեցիներ էին պարկերվում, մշուշների միջից հարազար դեմքեր էին հառնում, ու իմ մարքերը շաղվում էին, երեսակայությունս ինձ բարորում ու փանում էր Ասածո հեռուները: Ամբողջ մի կյանք ասես այդ պարկերի կախարդանքի մեջ լինեի, բայց մի փնտրակ կիսաբուն-կիսաարթուն վիճակ էր, որ մի օր լրիվ արթնությամբ էր թեժանալու: Ու թեժացավ՝ Արցախի փրկության գանգով...

Այս պարտումների մեջբերումը բոլորովին ինքնանպաստակ չէ, սա ընդամենը վկայությունն է այն իրողության, որ ամեն մի հայի մեջ նույնիսկ չփնտրած ու չսպրկված ցավի մի ծվեն կա խճճված, եւ այս ամենն այնքան խիտ ու թանձր նստվածքով է մեր հիշողության ասփառը պարել, որ թվում է, թե մեր ամբողջ կյանքն այսպիսի պարտումներով հյուսածո թնջուկ է, անկախ նրանից՝ մեր աչքերով ենք փնտրել, թե մեր պապերի աչքերով: Իսկ այդ ամենի ոճրագործությանն ականափես քանի՞ զույգ աչքեր կան այս երկու հարորում, սևաթույր հուշի ու զգայական ալեկոծումների քանի՞ հազար ալիք, միտք ու հույզի քանի՞ բռնկում-պոռթկում, քանի՞ զսպված ճիչ ու չձնված մանուկ, քանի՞ կույսի հառաչ ու խելագարված մոր ողբուլաց, իր բնի մեջ խեղդված քանի՞ հանճար ու կիսափ մնացած աղոթք...

-Դե եկ, Վարդապետ,

Ու մի խենթանա...

Մեռական խոսքն ամբողջացնելու համար Գեորգ Արելեանի՝ «Յկեանս նահապարկութիւն 2, Աղբարիկ, Ափիկ Մը Զո՛ր...» գրքից մեջբերենք մի պարտում, որը վերնագրված է՝ «Կոմիտաս Վարդապետին Ձայնը», որտեղ Կոմիտասի թանձրացող մարքի ոստայնում հյուսվող փնտրելի վերապրումով կարծես ամբողջանում է մոխրացած հուշի մեջ անթելված ցնորքը.

«Մարի եւ Վարդուհի աղջնակ քոյրերը փակալին իրենց մանկությունը չապրած, գաղթական դարձած էին: Անունք բռնագաղթի եւ աքսորի գեհենէն կանցնին: Պարտերագմին վերջաւորութեան այս քեսապցի քոյրերը Պոլսոյ մէջ ականափես պիտի ըլլային խելագարած Կոմիտաս վարդապետի երգելուն: Վարդապետը չէր կրնար կեղբոնանալ. անոր աչքին դարձեալ կերելէին... Կոմիտասն ալ անցած էր միեւնոյն գեհենէն: Ան սաստիկ ընկճուած էր: Կարելի եղած էր զայն թրքական եաթաղանէն փրկել, բայց անոր ընկերները գացած էին ու չէին վերադարձած: Ինչպէ՛ս չխենթանար, Կոմիտասի ձայնը ինչպէ՛ս խոպոյր չդառնար, երգերը ինչպէ՛ս չփոթէր...

Մարի եւ Վարդուհի իրենց վիշտը խառնելով Կոմիտաս վարդապետի վիշտերուն, ճամբան կը շարունակեն Պոլսոյ թաղերուն մեջ եւ կուղղուին դէպի որբանոց»:

Այս երկու հարորները ունեն մի կարեւոր առաքելություն եւս. բերված փաստերն ու վկայությունները ոչ միայն անժխտելի են դարձնում Մեծ Եղեռնի իրողությունը, այլեւ պարկերացում են փալիս Թուրքիայում նախաեղեռնական քաղաքական իրավիճակի, թուրքի եղեռնական մարքի կեռածուռ սողքի, ոճրագործության դրդապատճառների ու զարգացումների, ինչպես նաեւ հերետեղեռնյան արձագանքների ու հիմնավորումների մասին: Այս հարորները մի ողջ ազգի կենսագրության որոշակի ժամանակահատվածի մի յուրօրինակ ու արյունալի

ներկայական են, որպես յուրաքանչյուր վրձնահարված ոճագործության իր խորքային թանձրացումն ունի: Եւ շար ճիշդ է վարվել Յ. Իսկահերեանը, որ վավերագիր արձանագրությունների ու ականաբեւեւների վկայությունների վրա հիմնվելով, չի շրջանցել նաեւ գեղարվեստական պատումները, քաջ գիտակցելով, որ այդ պատումների հիմքում նույն դժոխային իրականությունն է՝ իր ողջ մանրադրվագ զարգացումներով: Ի վերջո աներկբա է, որ գեղարվեստական խոսքն օգնում է մարդուն՝ իր ներքնմթնոլակա հույզերի մեջ ճիշդ կողմնորոշման ու վավերագիր արեւսրի ճիշդ ընկալման հարցում: Եւ հենց այս իմաստով, մարմանշված գրքերն ու վկայությունները մութի ու հույզի մի անքակտելի հյուսվածք են, որոնց շնորհիվ էլ ընթերցողի համար շերտ առ շերտ արեւանելի ու ընկալելի է դառնում այն իրողությունը, որն էլ հենց կոչվում է հայոց Մեծ Եղեռն:

Նշենք եւ առանձնահատուկ գոհունակությամբ ընդգծենք, որ հարորներում ամփոփված ողջ նյութը շար խելամարտեն է ներկայացված. նախ բերվում են մարմնագիտական հավասարի արեղեկություններ՝ հեղինակի անուն ազգանունը, նրա ով լինելը, մասնագիտությունը, գրքի վերնագիրը, հրատարակության վայրը, հրատարակության տարեթիվը, երբեմն նաեւ հրատարակչության անվանումը, էջերի քանակը, չափը... Նախ հեղինակի կենսագրության մասին համառոտ արեղեկություններով ներկայացվում է տվյալ գիրքը, այնուհետեւ բերվում են ցեղասպանության մասին փաստերն ու վկայությունները: Ավելացնենք, որ Ա հարորն ընդգրկում է ավելի քան 90, իսկ Բ հարորը՝ մոտ 55 գրքի ամփոփումները: Այսինքն՝ մոտ 150 գիրք է ներկայացված Ա եւ Բ հարորներում, երբեմն էլ այնքան խիտ ու տարաբնույթ են վկայությունները, որ թվում է թե մի գրքի մեջ մի քանի գիրք է ներկայացված: Դարդում ես այս ամենն ու եզրափակիչ հոգոցով արտաբերում՝ այո, իսկապես որ այստեղով թուրքն է անցել...

Մեզ մնում է կրկնվելուց խուսափելու համար միայն ավելացնել, որ վար չէր լինի, եթե այս արեւսրերի թարգմանությունների նաեւ խրատակավառակները լինեին՝ ելնելով մեր ժամանակների համակարգչային արեղեկարվության պահանջարկից: Դա ավելի դյուրին կդարձնի հսկայածավալ նյութը իր հասցեարիւղը հասցնելու պարտադրանքի պես պահանջված գործը: Ինչ էլ անենք՝ մեր մեջ պիտի արթուն լինի այն գիտակցությունը, որ ուշ թե շուր աշխարհը պիտի ընդունի Վայոց Յեղատապանության փաստը. այստեղ երկու կարծիք լինել չի կարող:

Մեր խորին հարգանքն ու գոհունակությունը հեղինակին՝ տքնաջան աշխատանքի ու ձեռնարկած գործի հանդեպ պարասխանարվության բարձրագույն սելեռում ու պարվախնդրություն դրսեւորելու կապակցությամբ:

Ատրված մեզ օգնական:

ՎԱՏԱՆ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ